63 (07)
Ա - 18

ԱԳՐՈ-ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՒՍՊՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

—

ՊԵՏՀՐԱՏ 1928

04 AUG 2010

63(07)
Ա-18

ԱԳՐՈ-ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՒՄԿՈՄՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1003
13542

Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆ
Ընդանրական Գրադարան

ՊԵՏՀՐԱՏ 1928

14954
.01. 2013

Գր. № 1023 բ. Հրատ. № 849

Պետհրատի 2-րդ տպարան, Երևանում

Պատվեր № 1218 Տիրաժ — 1500

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Այս ծրագիրը նպատակ ունի գյուղի կուսակցականին և կոմսերիտականին ծանոթացնելու կուսակցության կողմից վերջերս արված հրահանգների հետ, որոնք վերաբերում են գյուղական տընտեսության կազմակերպության և եկոնոմիկային, մասնավորապես այդ տնտեսության համայնացման (արտադրական կոոպերացման և կոլեկտիվացման միջոցով)։

1927 թ. հրատարակված եր ծրագիրը գյուղական շրջիկ կուսդպրոցների համար, դարձյալ գյուղատնտեսական խընդիրների մասին։ Այս ծրագիրն անցյալ տարվա ծրագրի վերամշակմանը և կազմված։ Այս անգամ ավելի մանրամասն են մշակված այն հարցերը, որոնք վերաբերում են գյուղատնտեսության պլանավորման, ուժեղացված և այն մասը,

վոր վերաբերում է կոոպերացման և կոլլեկտիվացման գործնական խնդիրներին։ Հանված են այն դրույցները, վոր վերաբերում են գյուղատնտեսության տեխնիկայի առանձին և նեղ-ժամանակիտական բնույթ կրող խնդիրներին։

Տեխնիկային վերաբերող առանձին հարցերը, վոր կառաջանան դասընթացքն անցնելուց, ավելի լավ է տեղում լուսաբանել, ինկատի ունենալով տեղական պայմանները։ Այդ նպատակով կարելի չէ ազատվել շրջանի կամ գյուղի վարձակալներից, ցուցադրական դաշտերից և այլ ագրո-հիմնարկներից, հարկավոր դեպքում դիմելով ագրոնոմի ոգնության։

Մնացած խնդիրները պետք է յուրացվեն խմբակային աշխատանքի կարգով և ինքնակրթության։ Ի հարկե, գյուղատնտեսական տեխնիկային վերաբերող այս կամ այն խնդրից հրաժարվել չի կարելի, պարապմունքների ընթացքում նրանք կզբաղեցնեն ունկընդիրներին։

Ծրագիրը նախատեսում է տասն և մեկ պարապմունք։ Պարապմունքից առաջ անհրաժեշտ է մի ընդհանուր ակնարկ անել, համառոտակի լուսաբանելու համար այն հիմնական խնդիրներն ու գործնական միջոցները, վոր ծրագրված են 15-րդ կուսհամագումարի և կենտկոմի 1928 թ. հուլիսյան պլենումի կողմից, գյուղական առանձին արտադրությունների արտադրական ուժերի բարձրացման և այդ տնտեսությունները կոլլեկտիվացման ճանապարհով տանելու համար։

Պարապմունքներն սկսվում են տվյալ շրջանի գյուղատնտեսական արտադրության բնական և տնտեսական վիճակի ուսումնասիրությամբ, լուսաբանվում են այն փոփոխությունները, վոր գյուղատնտեսության մեջ մտել են վորպես Հոկտեմբերյան հեղափոխության արդյունք և այդ հիման վրա յել պարզա-

բանվում են պետության կողմից ձեռնարկած միջոցները՝ գյուղական տնտեսության վերակառուցման և բարձրացման համար (առաջին յերկու պարապմունքը)։

Այդ յերկու պարապմունքի ընթացքում հարկավոր է կապել իրար գյուղատնտեսության ընդհանուր վիճակը և կուսակցության կողմից համամիութենական մասշտաբով առաջադրած գործնական միջոցները տվյալ շրջանի գյուղատնտեսության ընդհանուր վիճակի և գործնական միջոցների հետ։

Հետագա պարապմունքները հատկացված են առանձին գյուղական տնտեսությունների բարձրացման և նրանց հետագա կոլեկտիվացման։ Այդ նպատակով ել խոսվում է հողաշինարարության, ցանքաշրջանառության, աշխատանքի կազմակերպման, անասնապահության և տնտեսության մնացած մասերի գյուղերի մասին (բանջարաբուծության,

մեղվապահության, շերամապահության, թռչնաբուծության)։

Յերկու պարապմունք (9-րդ և 10 րդ) հատկացված են տնտեսության գործնական կազմակերպության խնդիրներին։ Տրվում է կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպչական պլանի կոնկրետ օրինակը և ցույց է տրվում, թե ինչպես կարելի յե իրագործել այդ պլանը։

Վերջին պարապմունքը հատկացված է գյուղատնտեսական կոոպերացիայի և կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպչական շինարարության։ Այդ նույն պարապմունքի վերջում ասվում է կուլտուրական հեղափոխության և արտադրական պրոպագանդայի խնդիրների մասին և տրվում են մի շարք մեթոդիկ ցուցմունքներ թե ինքնակրթությամբ ուսումնասիրելու գյուղատնտեսության տեխնիկայի և կազմակերպման խնդիրները և թե գյուղացիների մեջ արտադրական պրոպագանդ կազմակերպելու համար։

Ծրագիրն անցնելու ամենահիմնական ձևը գրույցներն են, որ պիտի տանել, միաժամանակ հոգ տանելով, որ ունկնդիրները տանը ինքնուրույն աշխատանք կատարեն։ Շատ ողջակար է, յեթե ծրագրին զուգընթաց կազմակերպվեն եքսկուրսիաներ և համապատասխան գործնական պարապմունքներ՝ գյուղատնտեսության հետ առնչություն ունեցող։

Տեսական և արտադրական-գործնական պարապմունքներին զուգընթաց պիտի կազմակերպել ունկնդիրների համար հասարակական աշխատանք՝ շրջանի գյուղատնտեսության և նրա կոոպերատիվ ու կոլեկտիվ շինարարության կարիքներին ու խնդիրներին նպաստած լինելու համար։ Այդ աշխատանքը պիտի կատարել տեղական ագրոնոմի ղեկավարությամբ։

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Շրջանի բնական և տնտեսական պայմանները՝ կլիման, հողը, բնակչությունը, հողով ապահովված լինելը, ջրովի հողերի կենդանի և մեռյալ ինվենտարի քանակությունը։ Գյուղի շերտավորումը։ Գյուղական տնտեսության բյուջեն (չքավորի, միջակի և կուլակի)։ Կոլեկտիվ տնտեսության բյուջեն։ Ի՞նչ ստացավ մեր գյուղը խորհրդայնացումից հետո։ Գյուղատնտեսության առանձին ճյուղերի ընկնելն ու բարձրանալը։ Ապրանքայնության զարգացումը, շուկան և հաղորդակցության միջոցները։ Առանձին շրջաններ և նրանց գյուղատնտեսության զարգացման ուղիները։ Տվյալ շրջանի գյու-

գյուղատնտեսության ուսումնասիրության նշանակությունը։ Ուսումնասիրության մեթոդներ և գործնական լեզրափակումներ։

2. ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

Գյուղատնտեսության վերակազմության և վերականգնման հիմնական միջոցները, չքավոր և միջակ տնտեսությունների արտադրողական ուժերի վերելքը, նրանց կոոպերացումն ու կոլեկտիվ տնտեսությունների ստեղծելը։ Գյուղին արտադրության միջոցների հայթայթումը (լծկան, մեքենաներ, սերմացու)։ Խորհրդային տնտեսությունները և նրանց դերը շրջակա գյուղացիական տնտեսությունների համար։ 15-րդ կուսհամագումարի վորոշումը խոշոր և հացահատիկային խորհրդային տնտեսություններ կազմակերպելու մասին։ Գյուղատնտեսական ինդուստրիայի զարգացումը։ Գյուղի էլեկտրիֆիկա-

ցիան։ Գյուղատնտեսության զարգացման և վերակառուցման համար հատկացված պետական վարկը և նրա դերը սակավազոր տնտեսությունների համար։ Հացահատիկային և տեխնիկական մշակույթների կոնտրակտացիան։ Արտադրական կոոպերացումն ու կոլեկտիվիզացիան։ Գավառի կամ շրջանի գյուղատնտեսության վերակառուցման պլանը և նրա կիրառումը։

II. ԳԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. ՀՈՂԱՅԻՆ ՏԵՐՐԻՏՈՐԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ (ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ) ՅԵՎ ՄԵԼԻՈՐԱՑԻԱ

Գոյություն ունեցող անհատական հողագործումը և նրա թերությունները (հողհեռավորություն և հողերի ցրվածություն)։ Միջգյուղյան և ներքին հողաշինարարություն։ Գյուղակների կազմելը. գյուղի պլանիրովկան և հողագործումը։ Կոլեկտիվների հողա-

շինարարությունը (կոմունաների, արտելների և համայնական հողագործման ընկերությունների)։ Հողաշինարարության կարգը։ Հողային կոդեքսի նոր փոփոխումներ։ Հողաշինարարության համար հատկացված վարկը և չքավորներին տրված ոգնությունը։ Մելիորացիա. վառոգումն, չրաշինարարություն, ճահիճների չորացնելն։ Պարքար վարելու հողերի, խոտհարքների և արոտատեղերի քարքարոտության դեմ, միջգյուղյան և հանդերի ճանապարհների կարգավորումը, կամուրջների կառուցումը և այլն։ Զրոգտագործումը։ Մելիորատիվ ընկերություններ։

Գրականություն

1. Ա. Ավդալբեգյան — ՀԽՍՀ Հողային Որենսգիրքը։

2. Նույնի — Գյուղի հողաշինարարությունը։

4. ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ցանքաշրջանառության գոյություն ունեցող ձևերը շրջանում և նրանց առավելությունները։ Պողափոխական

ցանքաշրջանառության առավելությունները։ Դաշտավարության և հողի մշակման յեղանակը տվյալ շրջանում։ Ապրանքայնացումը և դաշտավարության թույլ կազմակերպումը։ Շրջանի արտադրական մասնագիտացում (շրջանացում)։ Տվյալ շրջանի տնտեսության համար ցանքաշրջանառության տիպեր մշակելու անհրաժեշտությունը։ Խոտացանություն. կերի ապահովման պրոբլեմը, արմատապտուղների և պալարապտուղների մշակությունը։ Համայնական ցանքի առավելությունը։ Ընտրած սերմերի, ախտահանման և մեքենաների գործադրման անհրաժեշտությունը։ Տարբեր ցանքաշրջանառության պիտանիությունը տվյալ շրջանի համար՝ աշխատանքի ամենալավ գործադրման և ամենաբարձր ապրանքայնության տեսակետից։ Ցանքաշրջանառության կիրառումը չքավոր տնտեսությունների համար։ Ցանքաշրջանառության կիրառման տեխնիկան։ Դաշտավարության

հումուլթի կոոպերատիվ վերամշակման և վաճառման կազմակերպումը։

5. ԴԱՇՏԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ցելերն իբրև հողերը պարարտացնող միջոցներ (վաղ ցել, ուշացած ցել, աշնանացել, սև ցել, զբաղված ցել և այլն)։ Դեմի և ջրովի հողերում ջուր պահելու նշանակությունը բերքատվության համար մեզանում։ Հողերում ջուր պահելու միջոցները (փխրացում, քաղհան, ծղնոտավար և այլն)։ Թիթեռնածաղիկներն իբրև պատարտացնողներ։ Բնական և արհեստական պարարտանյութեր (գոմաղբ, մարդու աղբ, խառնաղբ, մոխիր, ազոտային, ֆոսֆորային և կալի աղային պարարտանյութեր)։ Ցանքաշրջանառությունն իբրև բերքատվությունը բարձրացնող միջոց։ Բերքատվությունը բարձրացնելու միջոցների կիրառման մասսայականացումը և դրա ձևերը։

Գրականություն

1. Սոկոլնին — Ի՞նչպես պետք է կռվել չորության դեմ անջրդի հողերում։

2. Ա. Ա. Տրիֆոնով—Ինչո՞ւ պետք է ցելը շուտ ցանել։

3. Իս. Տեր-Ներսիսյան—Գոմաղբը։

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՎԵՆՏԱՐԸ

Անհատական տնտեսության մեջ բանվոր ձեռքերի, լծկանի և ինվենտարի անշահավետ օգտագործումը։ Բանվոր ձեռքի և լծկանի քանակի համեմատությունը անհատական և կոլեկտիվ տնտեսությունների հողերի միևնույն տարածության նկատմամբ։ Մեքենաների նշանակությունը և նրանց արտադրողականությունը։ Տվյալ շրջանի համար անհրաժեշտ մեքենաների դերը։ Գյուղատնտեսական գործիքների ու մեքենաների քանակը այժմ և հե-

գափոխությունից առաջ։ Տրակտորը և նրա դերը գյուղատնտեսության կոոպերացման մեջ։ Տրակտորի դերը տվյալ շրջանում։

Ձիու և յեզան աշխատանքների հաժեժատությունը գյուղատնտեսության մեջ և յեզից ձիուն անցնելու կարևորությունը մի շարք շրջաններում։ Լծասարքի բարեփոխումը։

Վարկային ընկերությունների, գյուղատնտեսական կայանների և փոկերի գործիքների և մեքենաների ոգտագործումը գյուղացիության կողմից։ Մեքենաոգտագործման ընկերությունները և նրանց աշխատանքը։ Ի՞նչ միջոցներ են ձեռք առնվում, որպեսզի ընկերությունները չդառնան կուլակների շահագործման առարկա։ Ի՞նչ արտոնություններ են ստանում սակավազոր տնտեսությունները մեքենա ձեռք բերելուց։ Աշխատանքի կազմակերպումը կոլեկտիվ տնտեսության

մեջ (բաշխումն ըստ աշխատանքի, աշխատանքի հաշվառումն ու վարձատրությունը)։

III. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՄԱՅՆԱՑՈՒՄԸ

(7—8-րդ պարապմունք)

Մեր անասնապահության թերությունները ըստ նրանց առանձին ճյուղերի (վատ կերակրում և խնամք, քիչ ոգուտ, դժվարություններ անհատական տնտեսության մեջ կենդանիների ցեղն ապնվացնելու նկատմամբ)։

Անասունների խնամքի և բազմացման կազմակերպումը (անասնապահական ընկերություններ, անասնաբուծարաններ, բեղմնավորման կայաններ)։ Կոոպերատիվ գոմեր։ Անասնապահության տեխնիկան, խոշոր յեղջյուրավոր անասունների կերակրելն ամառվա և ձմեռվա ընթացքում. հոգեր ձիերի, վոչխարների մասին։ Ցանովի խոտի տարածությունը։ Ամառային և ձմեռա-

1003
13549

Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
Научная Библиотека

լին արոտատեղեր։ Ի՞նչ ճանապարհով ե լրացվում կերի պակասը։ Որինակելի գոմեր, կթնարտեղները և նրանց նշանակությունը անասունների խնամքի համար։ Արոտների և համայնական խոտհարքների բարելավման աշխատանքներ։ Սարարոտների ոգտագործման բարելավման խնդիրները։ Փոչվորական և նստակյաց անասնապահության պակասություններն ու առավելությունները։

Անասնապահական մթերքների վերամշակումն ու վաճառքը։ Յուղագործական և պանրագործական արտելներ։

Գրականություն

Խ. Յերիցյան — Անասնապահություն, պր. ա. — Մեր անասնապահությունը և նրա բացերը։

IV. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՃՅՈՒՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. ԱՅԳԵԿՈՐԾՈՒԹՅՈՒՆ[1], ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՄԵՂՎԱՊԱՇՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՇԵՐԱՄԱՊԱՇՈՒԹՅՈՒՆ

Այգու, բանջարանոցի, մեղվանոցի նշանակությունը գյուղացու բյուջեի համար։ Բանվորական ազատ ձեռքերի ոգտագործումը։ Այդ ուղղությամբ կազմակերպած կոլեկտիվներ. կոլեկտիվ այգիներ, բանջարանոցներ, տնկարաններ և մեղվանոցներ։ Նրանց առավելությունը անհատականի հանդեպ։ Ընդեղենների և պտուղների վերամշակումն ու վաճառքը կոոպերատիվ հիմունքներով։ Թռչնապահությունը, նրա

1) Այգեկործությունն (խաղողամշակությունը) ու շերամապահությունը պետք և ավանդվին այն դպրոցներում, որոնց շրջանում գոյություն ունեն այդ ճյուղերը։

տեխնիկան և վիճակը։ Թռչնապահության ոգուտն ու թռչնապահական արտեղները։ Շերամապահությունը խորհրդայնացումից առաջ և հետո։ Մեքսամանարանները։ Շերամապահության զարգացման հեռանկարները մեզանում։

Այգեգործությունը և նրա տարածման չափը։ Կոլեկտիվ այգեգործություն։ Խաղողի այգիների ընդհանուր տարածությունը։ Այգեգործության վերակառուցման հնգամյա պլանը։

V. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՆՐԱ ՊԼԱՆԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

9. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՐԶ ԶԵՎԵՐ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Հաշվառման նշանակությունը տնտեսությունն ուղիղ վարելու և կազմակերպչական պլան կազմելու համար։

հատկապես կոոպերատիվ և կոլեկտիվ տնտեսություններում։ Կոլեկտիվների և կոոպերատիվ տնտեսությունների հաշվառման որինակելի ձևեր։ Ի՞նչ է տնտեսական կազմակերպչական պլանը (պերսպեկտիվ և գործառնական)։ Պլան կազմելու չեղանակները և նրա էլեմենտները։ Առանձին տնտեսությունների հզորության հաշվառումը կազմակերպչական պլանը կազմելիս։ Կազմակերպչական պլանի ձևը։

10. ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Կոլեկտիվի և տվյալ գյուղի կազմակերպչական կոնկրետ պլանի կազմելը, անցյալի տնտեսական վիճակի նկարագրով և նոր պլանի կիրառմամբ։

11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գյուղատնտեսական կոոպերացիայի առանձին ճյուղերի աշխատանքն ու

դրությունը. վարկային հիմնարկներ և գյուղատնտեսական մթերքների սպառման գործը։ Մթերքների վերամշակման արտադրական կոոպերատիվներ (կաթնարտեղներ և այլն)։ Գյուղատնտեսական կոոպերացիայի հերթական խնդիրները. ցանցի ուժեղացումն ու խոշորացումը, տնտեսական աշխատանքի բարելավումը և ֆինանսական հզորացումը նորանոր կոոպերատիվ միավորներ կազմելով։

Կոլեկտիվները գյուղի սոցիալիստական վերակառուցման հենակետ բջիջներն են։ Կոլեկտիվների միջոցների կազմակերպումը և հանրացրած՝ հիմնական կապիտալի կուտակումը։ Անդամների աշխատանքի հաշվառումը, վարձատրությունը և եկամտի բաշխումը։ Գյուղատնտեսական կոլեկտիվների մասին ելեկտրական որենքներն ու կարգադրությունները։ Կոլտնտեսությունների ղեկավար որգանները։ Կոլտնտեսությունների կուլտուրական և քաղաքական աշխատանքը։

ՅԵԶԱՐԱՓԱԿՈՒՄ։ ԱԳՐՈԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ ՅԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Կուլտուրական հեղափոխության խնդիրները և արտադրական պրոպագանդը գյուղում։ Պրոպագանդի կազմակերպումը և մեթոդիկան։ Գյուղատնտեսական ցուցահանդեսներ, մրցանակաբաշխություն և եքսկուրսիաներ։ Ամբակային աշխատանք (կազմակերպումը, ծրագիրն ու մեթոդիկան)։ Գյուղի կոլեկտիվացման խնդիրների պրոպագանդը չքավորների համար։ Գյուղական ակտիվի ինքնակրթությունը և նրա յեղանակները։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳԱԴ. ... Ա. ՄԵԱՍՆԻԿՅԱՆ ... Публичная Б

ՀՀ Ազգային գրադարան
NL0276973

14954

ԳԻՆՆԵՑԿ.